

ԱՆՑԵԱԼՔ

I

ՎԱՀԱՆ ԳԱՐՏԱՇԵԱՆ

Հայկական դատի մոլեռանդ հաւատաւորներէից մէկն էլ զնաց յունիս 11-ին, Նիւ Եօքքում, մեռաւ Վահան Գարտաշեանը: Նա համեատարար ուչ միացաւ Հայաստանի ազատութեան համար պայքարողների բանակին, բայց դորձեց եռանդով ու անձնազոհութեամբ եւ մինչեւ մահ հաւատարիմ մնաց ընտրած գաղափարին:

Վահան Գարտաշեանը կեսարացի էր, ծնւած 1883 թ. դեկտ. 1-ին: Նախնական ուսումը ստացել էր կեսարիայի Ս. Բարսեղ դըպրոցում: 1902 թ. անցել էր Ամերիկա, ուր մի կողմից գործաւորութիւն էր անում, միւս կողմից վաստակած զբամով ուսնում էր ԵՃԵԼԻ համալսարանը, որի իրաւարանական բաժանմունքը աւարտեց 1908 թ.ին: Նոյն 1908 թ. հրատարակեց անդլիերէն լեզուով «20-րդ Դարի Օսմանեան կայսրութիւնը» եւ «Մերձաւոր Արեւելքի հարցի ամփոփ պատմութիւնը» աշխատութիւնները, որոնք ցոյց էին տալիս, որ երիտասարդ հեղինակը ոչ միայն լաւ ուսանող էր իր մասնագիտութեան, այլեւ հմուտ ուսումնասիրող արեւելեան խնդրի:

1909 թ. իրաւունք ստանալով Նիւ Եօքքի նահանգում զբաղելու իրաւարանութեամբ՝ Վ. Գարտաշեանը նւիրեց վաստարանութեան գործին, միեւնոյն ժամանակ, սակայն, չանտեսելով եւ հասարակական-քաղաքական ասպարէզը: 1910 թ. նա նշանակեց Վաշինկտոնի Օսմանեան դեսպանատան եւ Նիւ Եօքքի թիւրքական հիւպատոսարանի իրաւագէտ խորհրդական եւ այդ պաշտօնը պահեց մինչեւ 1914 թ., համաշխարհային պատերազմի սկիզբը: Օսմանեան կառավարութիւնը նրան յանձնեց թիւրքական բաժնի կազմակերպումը Սան-Ֆրանչիսկօի համաշխարհային ցուցահանդէսում եւ այդ աշխատանքի, ինչպէս եւ դեսպանատան եւ հիւպատոսարանի պաշտօնավարութեան ոռճիկի մի մասը թողեց չլճարած, որի համար հետագային Գարտաշեանը դատ բաց արաւ թիւրքական կառավարութեան դէմ:

Արմէն Գարօն եղաւ, որ Վ. Գարտաշեանին քաշեց հայ քաղաքիկան գործի ասպարէզ, համաշխարհային պատերազմի ընթացքին, երբ Ամերիկան դարձաւ հայկական հարցի ամենակարեւոր կեդրոններէից մէկը: Իր հմտութեամբ, անհուն աշխատունակութեամբ, լայն կապերով, իր համարձակ ու եռանդուն գործելակերպով Վ. Գարտաշեանը արձաւ նախապէս կաթողիկոսական Պատւիրակ, ապա՝ Հայաստանի Հանրապետութեան ղրւանագիրտական ներկայացուցիչ Գ. Փաստրմաճեանի աջ բազուկը: Պրէս Բիւրօն եւ Հայաստանի Անկախութեան Ամերիկեան Կոմիտէն Վ. Գարտաշեանի անխոնջ ջանքերի մարմնացումը եղաւ: Նա անզնահատելի դեր կատարեց Հայաստանի անկախութեան ճանաչման հարցում Միացեալ Նահանգները կողմից, այլեւ Ամերիկայի աջակցութեան խնդրում Հայաստանին, ինչպէս նաեւ նախագահ Վիլսոնի Հայաստանի սահմանների զծման մէջ: Նրան եւք պարտական մեծապէս, որ ծերակուտական Քինգի, Ջէյմս Ջերարդի, ծերակուտական Լոճի, Վ. Բրայլնի պէս ականաւոր քաղաքական գործիչներ եւ ուրիշ շատ շատեր դարձան հայկական գաղի ջատագովներ եւ որ հայկական խնդիրը ջերմ համակիրներ ունեցաւ Ամերիկայում: Նրա ջանքերով էր, որ Դէմոկրատ կուսակցութիւնը Հայաստանի ազատութեան պահանջը իր պըլտֆորմի կէտ դարձրեց:

Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, երբ շատերը նահանջեցին, կամ ընկճած՝ քաշեցին հրապարակից, Գարտաշեանը մնաց հաւատարիմ Հայաստանի անկախութեան գաղափարին: Այս անգամ արդէն իրրեւ Շ. Շ. Փարիզի Պատւիրակութեան ներկայացուցիչ եւ Պրէս-Բիւրօի վարիչ՝ շարունակեց գործել յանուն Հայաստանի ազատութեան: Ամենքի յիշողութեան մէջ դեռ թարմ են այն, կարելի է ասել, հերոսական պայքարը, որ նա կազմակերպեց ընդդէմ Լոզանի դաշնագրի վաւերացման եւ այն փայլուն յաղթանակը, որով պահուեց այդ պայքարը:

Գարտաշեանի վերջին գործը՝ Խորհրդ. Միութեան Ամերիկայի կողմից ճանաչելու առթիւ կատարւած քայլերն են, ինչպէս եւ Ղեւոնդ եպ. Դուրեանի սպանութեամբ ամբաստանւողների դատի կազմակերպումը: Վերջին այս գործը նա չկարողացաւ աւարտել. անողոք հիւանդութիւնը զգետնեց նրան, եւ, ի վերջոյ, իջեցրեց գերեզման: Վ. Գարտաշեանը մեռաւ համեմատաբար երիտասարդ, գործունակ հասակում, երբ դեռ նրա հետ այնքա՛ն յոյսեր էին կապւած:

Վ. Գարտաշեանը բացի անսահման հաւատից ու մոլեռանդութիւնից, նաեւ հմուտ, քաղաքականօրէն զարգացած, Մերձաւոր Ա-

րեւելքի պատմութեան եւ ներկայ պայմաններին խորապէս իրազեկ, արտակարգ աշխատունակութեան տէր, Հայաստանի դատին անհոռութէն նւիրւած, անձնական կեանքում բիւրեղի պէս մաքուր, ծայր աստիճանի անձնագոհ, զազափարական անձնաւորութիւն էր : Նրա գրչի տակից դուրս են եկել, գլխաւորապէս անգլիերէն լեզուով լազմաթիւ յօդւածներ եւ երկարաշունչ գրական աշխատանքներ, որոնք ահապին դեր են կատարել հայ ժողովուրդի ու հայկական հարցի ժողովրդականացման գործում : Իր դրւածքները հիմնաւորելու համար նա, յաճախ, լայն խուզարկութիւն էր կատարում, շարաթնեքով դեգերում էր հանրային մատենադարաններում, նորանոր աղբիւրներ էր երեւան հանում : Այդ պատճառով նրա գրութիւնները միշտ հարուստ էին նիւթով եւ կուռ տրամարանութեամբ : Ծնորհիւ իր մեծ կիրքի՝ նա ունեցաւ եւ ճախորդ քայլեր, բայց, ընդհանրապէս, նրա հիմնական միտքը եւ որդեգրած ուղին շիտակ էին :

Վ. Գարտաշեան գերազանցապէս քաղաքական միտք էր. նա մեկնում էր քաղաքական փաստերից : Այդ է պատճառը, որ նա երբեք չչեղեց Հայաստանի անկախութեան գաղափարից : Նա շատ լաւ լմբոնում էր, որ հայկական հարցի լուծման միակ իրական միջոցը Հայաստանի պետականութեան վերականգնումն է, որ հնարաւոր է արտաքին զօրաւոր միջամտութիւններով : Արտաքին միջամտութիւններն էլ հնարաւոր են, եթէ կան շահագրգռւած մեծ ուժեր : Մասնաւորապէս Ամերիկայի հետ նա խոշոր յոյսեր էր կապում, եւ Ամերիկան դէպի Հայաստան գրաւելու իբրեւ կարեւոր ազդակ համարում էր Հայաստանի տնտեսական հարստութիւնները, մասնաւորապէս քարիւղը :

Վ. Գարտաշեանի նկարագրի ցայտուն գծերից մէկն էլ չափից աւելի շեշտւած անհատականութիւնն էր, Այդ գծի շնորհիւ նա չկարողացաւ իր անձի շուրջը ստեղծել այնպիսի միջնորդութեան, որ իր կողքին եւ իր հետ նաեւ ուրիշ ուժեր էլ պատրաստէին : Եւ երբ իջաւ գերեզման, նրա տեղը մնաց բաց : Եւ իրաւունք ունի Ջէյմս Ջերարտը, երբ ասում է, թէ՛ «Տարակուսում եմ, թէ՛ որեւէ մէկը պիտի կարողանայ գրաւել նրա տեղը յօդուտ Հայաստանի կատարուող գործում» : Միանգամայն արգար է եւ ծերակուտական Քինգի տւած բնորոշումը. «Գարտաշեանն եղաւ մի մեծ մարդ, ամբողջապէս նւիրւած Հայաստանի անկախութեան դատին եւ դրա համար էլ արժանի հայ ցեղի ճշմարիտ սիրոյն : Նա եղաւ ազգային անկախութեան եւ ազատութեան դատի ոգին» :

Այս՛, Վ. Գարտաշեանը եղաւ Հայաստանի ազատութեան եւ ան-

կախութեան մուկուանդ արտօյեաններէց մէկը: Նրա տեղը, դժբախտաբար, մնաց բաց եւ յայտնի չէ, թէ ո՞վ եւ երբ կարող է բռնել:

II

ՊՐՈՓ. Յ. Թ. ԳԱՅԱՆԱՆ

Յունիս 10ին Ալեքսանդրիայում մեռել է պրոֆ. Յ. Թ. Գայանանը: Հանդուցեալը իր կեանքը նւիրել էր մշակութային աշխատանքի՝ զբաղւելով մինչեւ մահ նոր սերունդի դաստիարակութեան գործով: Երիտասարդ տարիքին եղել է նաեւ յեղատիտական, որ, սակայն, երկարատեւ չի եղել:

Պրոֆ. Յ. Գայանանը ծնւել էր 1864 թ. օգոստ. 28-ին Մարդուանում: Աւարտելով Մարդուանի կոլէջը՝ նա ուսուցչութեան էր կոչւել նոյն դպրոցում, իբրեւ հայերէն լեզուի դասատու: Ձերմ հայրենասիրութեամբ վառաձեռ երիտասարդ էր, այդ պատճառով երբ Փոքր Հայքում երեւաց Հնչակեան Կուսակցութիւնը, անմիջապէս յարեց նրան:

Հնչակեան Կուսակցութիւնը զբաղւած էր այդ ժամանակ ցուցական ձեռնարկներով, որոնց հետեւանքով, 1892 թ. վերջերը, Կեսարիայում, Եոզկաթում, Մարդուանում եւ Փոքր Ասիայի մի քանի ուրիշ վայրերում տեղի ունեցան զանգւածային խուզարկութիւններ ու ձերբակալութիւններ: Մօտ 500 հայեր, իբրեւ քաղաքական յանցաւորներ, հաւաքեցին Գաղատիայի բանտը: Գրանց մի մասը, որոշ ժամանակից յետոյ ազատ արձակեցին, իսկ 56 հոգուն ամենադժոխային պայմաններում բանտային արգելքի տակ պահելուց յետոյ, 1893 թ. մայիս եւ յունիս ամիսներին դատի ենթարկեցին: Տեղի ունեցաւ Գաղատիայի նշանաւոր դատավարութիւնը:

Իրապէս դատ ու դատաստան չէր, այլ՝ դատական զաւեշտ: Կառավարութիւնը առաջուց տւել էր վճիռը. դատավարութիւնը արտաքին երեւոյթները փրկելու համար սարքւած մի խաղ էր: Ամբաստանեալներից 17 հոգի մահւան դատապարտեցին, 6 հոգի՝ 15 տարւայ բերդարգելութեան, 8 հոգի՝ 10 տարւայ եւ 10 հոգի, որոնցից մէկը կին, 7 տարւայ եւ այլն: Մահւան դատապարտւածներէ մէջ էր եւ պրոֆ. Յովհ. Գայանանը:

Գաղատիայի դատավարութեան շուրջ ակնադին յուզում առաջ եկաւ հայ եւ օտար հասարակութեան մէջ: Պրոֆ. Գայանանի հետ մահւան էր դատապարտւած եւ Մարդուանի կոլէջի պրոֆէսոր Կ. Թումայանը, որի զւիցերուհի կինը ոտքի հանեց Եւրոպայի հանրա-